ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ԴՏՊ-1160/11012/Ե-5»

Քաղ. Երևան «8» «02» 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ-ը, ի դեմս նախագահ Արփենիկ Աբրահամյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 11 326 888 (տասնմեկ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ութ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: Ծրագիրը իրականցվում է Երևան քաղաքում՝ ամսական 25 հաշմանդամություն ունեցող անձանց համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն << օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել << պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների, ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը: Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 90001039683 ՀԱՎՀ 01506515 Գլխավոր քարտուղար Նելլի Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ՀՎՀՀ 163018015129 ՀԱՎՀ 02219597 Նախագահ՝ Արիենիկ Աբրահամյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Ф. Тыныбекулуу

Ф. Бекзиярова

Ш. Мукашева

Հավելված 1
2022 թ. «02» «8» -ին
կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ

Համառոտագիր

Ծրագրով նախատեսվում է տրամադրել սոցիալ-հոգեբանական ծառայություններ թվով 25 հաշմանդամություն ունեցող անձանց՝ ապահովելով նրանց մասնակցությունը տարբեր արվեստի խմբակներում՝ ըստ նախասիրությունների և հնարավորությունների՝ նպատակ ունենալով զարգացնել և ամրապնդել նրանց աշխատանքային կարողությունները, ինչպես նաև ձևավորել հմտություններ կյանքի տարբեր իրավիճակներում ինքնուրույն կողմնորոշվելու համար: Կազմակերպել ճանաչողական և հետաքրքիր էքսկուրսիաներ, մրցույթներ, ժամանցային խաղեր և ցուցահանդեսներ:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում- Հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր չունեն զբաղվածություն հիմնականում մեկուսացված են հասարակությունից, որի արդյունքում իրենց առաջնային խնդրին զուգահեռ ի հայտ են գալիս նաև սոցիալ-հոգեբանական խնդիրներ, քանի որ չունեն մասնագիտական հմտություններ, հանրային վայրեր այցելելու հնարավորություն, շփման միջավայր, ընկերներ, որի արդյունքում նրանց մոտ զարգանում է անլիարժեքության զգացումը: Նրանցից շատերը չունեն ինքնուրույնություն, նաև ինքնասպասարկման, շփման ու հաղորդակցման, կենցաղային հարցերի ինքնուրույն լուծման, պարզ աշխատանքների կատարման հմտություններ: Ընտանիքների համար խնդիր է դարձել ինչպես վերացնեն կամ գոնե թեթևացնեն ընտանիքի հաշմանդամություն ունեցող անձի հոգեբանական բարդույթները:

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը
Մեր իրականության մեջ շատ քիչ են կառույցները, որոնք կարող են ապահովել և մատուցել սոցիալ-վերականգնողական ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձինք չունեն համապատասխան միջավայր, որը կապահովի նրանց անկախ կյանքի հմտությունների զարգացումը, ինքնուրույնության ձևավորումը, աշխատանքային կարողությունների զարգացումն ու ամրապնդումը, հասարակական կյանքին մասնակցությունը և համայնքում ներգրավումը: Այս ծրագիրը հնարավորություն կընձեռի բարելավելու շահառուների կյանքի որակը, ապահովելու նրանց մասնակցությունը հանրային կյանքին, զարգացնելու նրանց շփման և հաղորդակցման հմտությունները, ձևավորելու ինքնուրույնությունը միևնույն ժամանակ թեթևացնելով ընտանիքի բարոյահոգեբանական և սոցիալական վիճակը:

Կազմակերպության փորձառությունը

Առաքելություն-նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց կրթական և առողջապահական, ինչպես նաև նրանց ընտանիքների սոցիալական հիմնախնդիրների լուծմանը՝ ուսուցման, շահերի պաշտպանության, քարոզչության, խորհրդատվության, բուժծառայությունների տրամադրման և միջնորդավորման, ինչպես նաև հումանիտար օգնությունների միջոցով՝ նպատակ ունենալով նրանց ինտեգրել հասարակություն:

Նպատակներ.

- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց առօրյա զբաղվածությունը:
- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների և հնարավորությունների զարգացմանը կամ պահպանմանը՝ սոցիալ-վերականգնողական կենտրոնում տրամադրվող մասնագիտական ծառայությունների միջոցով:

- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը հասարակություն՝ իրականացվող ծրագրերի և կազմակերպվող տարբեր միջոցառումների միջոցով:
- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքում ինքնուրույնության ձեռքբերմանը՝ սոցիալական հարմարվողականության ձևավորման և/կամ զարգացման միջոցով:
- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների և կարողությունների մասին հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ կազմակերպելով քարոզարշավներ, տարբեր տեղեկատվական սեմինարներ կամ քննարկումներ՝ ուղղված շահառուների շահերի և իրավունքների պաշտպանությանը:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրով նախատեսվում է թվով 25 հաշմանդամություն ունեցող անձանց մատուցել սոցիալ-վերականգնողական ծառայություններ: Ծրագրի նպատակն է նրանց սոցիալական ներառումը հասարակություն՝ կանխարգելելով նրանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ: ՀԿ-ն երկար տարիներ զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի լուծմամբ, մասնավորապես՝ նրանց մատուցելով կարիքին համարժեք սոցիալ-հոգեբանական և սոցիալ-վերականգնողական աջակցություն: ՀԿ-ն ունի բազմամասնագիտական թիմ, որի անդամները ունեն մասնագիտական որակավորում և աշխատանքային փորձ՝ նման ծառայություններ մատուցելու համար: Նեղ մասնագիտական ծառայությունների մատուցման շրջանակներում հիմնականում ուշադրություն կդարձվի շահառուների կենսագործունեության հիմնական բաղադրիչների՝ ճանաչողությանը, ինքնասպասարկմանը, գիտելիքների ձեռքբերմանը, շփման և հաղորդակցման, աշխատանքային կարողությունների և հմտությունների զարգացմանը, համայնքային և սոցիալական կյանքի ձևավորմանը, ինչպես նաև մասնագետ-շահառու-ծնող կապի ամրապնդմանը, որը կնպաստի շահառուի հետ տարվող աշխատանքի և հասցեական ծառայությունների տրամադրման արդյունավետությանը: Կկազմակերպվեն անհատական և խմբակային պարապմունքներ՝ ըստ նրանց կարիքների գնահատման: Կենտրոնում գործում են արվեստի խմբակներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն կունենան զարգացնել և ամրապնդել իրենց աշխատանքային կարողություններն ու հմտությունները: Կկազմակերպվեն կենցաղավարության, ինքնասպասարկման, հասարակության մեջ դրսևորվելու, քաղաքավարության կանոնների, պատշաճ վարվելակերպի, հաղորդակցման հմտությունների ձեռք բերման թեմաներով պարապմունքներ: Շահառուների համար կկազմակերպվեն տարբեր էքսկուրսիաներ և այցելություններ պատմամշակութային վայրեր, մասնակցություն հանրային միջոցառումների, մրցույթներ, ժամանցային խաղեր, ինչպես նաև շահառուների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ, որտեղ հնարավորություն կունենան կենդանի քարոզարշավի միջոցով հանրությանը իրազեկել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կարողությունների և հնարավորությունների մասին:

Ակնկալվող արդյունքները՝

1. 25 շահառուի կարիքին համապատասխան սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում,
2. 25 շահառուի՝ ընտանիքում ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացում,
3. ճանաչողության, շփման և հաղորդակցման հմտությունների զարգացում,
4. զբաղվածության ապահովում,
5. անկախ կյանքի հմտությունների ձեռքբերում,
6. ինքնագնահատականի բարձրացում,
7. սոցիալիզացիայի զարգացում,
8. ակտիվ մասնակցության հանրային կյանքին,
9. աշխատանքային հմտությունների և կարողությունների ձևավորում:

Գործողություններ

Կենտրոնի բազմամասնագիտական թիմը երկար տարիներ աշխատում է հաշմանդամություն ունեցող անձանց հետ և քաջ ծանոթ է նրանց կարողություններին, հմտություններին և նախասիրություններին: ՀԿ-ն իր գործունեության առաջին իսկ օրերից համագործակցում է տարբեր պետական, հասարակական և մասնավոր կազմակերպությունների հետ, որի արդյունքում կազմակերպում է իր առաքելությամբ նախատեսված գործունեությունը: 1999թ.-ից աշխատելով հաշմանդամություն ունեցող անձանց հետ՝ ՀԿ-ն ձեռք է բերել ճանաչում, իրագործվել են բազմաթիվ ծրագրեր ի շահ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և անկախ կյանքի ձևավորման:

Ծրագրի մեկնարկից յուրաքանչյուր շահառու կգնահատվի բազմամասնագիտական թիմի կողմից, այնուհետև կկազմվի անհատական գնահատման թեթիկներ, որում խմբի դաստիարակները, նեղ մասնագետներն ու խմբավարները կպլանավորեն տվյալ շահառուի հետ աշխատանքի ընթացքը: Կկազմվի աշխատանքային գրաֆիկ, որտեղ արտացոլված կլինի յուրաքանչյուր շահառուի հաճախումները որևէ պարապմունքի կամ խմբակի: Պարբերաբար հանդիպումներ կլինեն ծնողների հետ՝ առավել ամրապնդելով և ապահովելով հասցեական սոցիալ-վերականգնողական ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն՝«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ Ծրագիր՝

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում

Ժամանակահատված՝ 01.02.-31.12.2022թ.

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ծրագրի ղեկավարում և համաձայնագրերի կնքում	Տնօրեն												
2	Ծրագրի համակար-գում, շահառուների բաշխում ըստ խմբերի	Համակարգող-մեթոդիստ												
3	Ծրագրի ֆինանսական միջոցների կառավարում	Հաշվապահ												
4	Տարրուսուցման խմբեր	Խմբի դաստի-արակներ												
5	Հատուկ հոգեբանի ծառայություն	Հատուկ հոգեբան												
6	Լոգոպեդի ծառայություն	Լոգոպեդ												
7	Սոցիալական աշխատողի ծառայություն	Սոցիալական աշխատող												
8	Ձեռագործության տարբեր ոճերի ուսուցում	Խմբավար												
9	Մաքրամե և ապլիկա-ցիայի ուսուցում	Խմբավար												
10	Նկարչության ուսուցում	Խմբավար												
11	Գեղագիտական ձևավորման /դիզայն/ ուսուցում	Խմբավար												
12	Կավագործության ուսուցում	Խմբավար												
13	Պար-ռիթմիկայի ուսուցում	խմբավար												
14	Շահառուների դեղերի տրամադրում ըստ գրաֆիկի, անհրաժեշ-տության դեպքում	Բուժքույր												

	առաջին բուժօգնու-թյան տրամադրում												
15	Շահառուների տեղափոխում	Վարորդներ											

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են 25 հաշմանդամություն ունեցող անձինք՝ Երևան քաղաքի տարբեր և հարակից համայնքներից:

Ծրագրի շահագրգիռ կողմերն են շահառուների ընտանիքները և համայնքը, իսկ ընդհանուր առմամբ պետությունը:

Ծրագրում շահառուների ընտանիքների ներգրավվածությունը նախատեսվում է հանդիպում-քննարկումների և մասնագիտական խորհրդատվությունների կազմակերպմամբ: Համայնքի հետ համագործակցությամբ շահառուները ներգրավվում են իրականացվող համայնքային ծրագրերում և մշակութային միջոցառումներին:

Ռիսկերի գնահատում

- Շահառուի ներընտանեկան խնդիրները, որոնք կարող են պատճառ դառնալ շահառուի կենտրոն չհաճախելուն: Խնդրի հաղթահարման համար կենտրոնի մասնագետները՝ հատուկ հոգեբանը, սոցիալական աշխատողը և խմբի դաստիարակը իրականացնում են տունայց՝ պարզելու և հարթելու խնդիրը:
- Նոր համաճարակի տարածումը, որը կբերի շահառուների և աշխատողների բացակայությունների: Կիրականացվի առցանց պարապմունքներ, որոնց արդյունավե-տությունը ցածր է՝ ելնելով շահառուների խնդրից:
- Շահառուներին տեղափոխող տրանսպորտամիջոցի տեխնիկական խափանումը, որը կարող է տևել մեկ կամ երկու օր: Ծնողների աշխատելու պատճառով շահառուները չեն հաճախի կենտրոն: Խնդրի հաղթահարման համար կենտրոնը ձգտելու է միջոցներ հայթայթել վերացնելու տրանսպորտամիջոցի խափանումը:
- Ֆինանսավորման բացակայությունը ծառայությունը լիարժեք իրականացնելու համար: Առաջարկում ենք պարբերաբար վերանայել ծրագրի իրականացման ֆինանսական պայմանները:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039683 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Վասիլ Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.	*Անվանումը՝* «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163018015129 ՀՎՀՀ 02219597 Նախագահ՝ Արփենիկ Աբրահամյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 2
2022 թ. «02» «8» -ին
կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039683 ՀԿՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163018015129 ՀԿՀՀ 02219597 Նախագահ՝ Արփենիկ Աբրահամյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
2022թ. «02» «8»
N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	*4100*									
Էներգետիկ ծառայություններ	4212									
Կոմունալ ծառայություններ	4213									
Կապի ծառայություններ	4214									
Ապահովագրական ծախսեր	4215									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216									

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039683
ՀՎՀՀ 01506515
Գլխավոր քարտուղար՝ Մամվել Մուրադյան

(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Անվանումը՝ «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163018015129
ՀՎՀՀ՝ 02219597
Նախագահ՝ Արփենիկ Աբրահամյան

(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
2022թ. «02» «8»-ին
կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման												
			Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 1 Երևան	99999999 /647	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում		1887.1	2831.7	3771.9	4723.3	5663.4	6603.6	7555.0	8495.2	9401.3	10375.4	11326.888	11326.888

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039683 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.	Անվանումը՝ «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163018015129 ՀՎՀՀ՝ 02219597 Նախագահ՝ Արտենիկ Աբրահամյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 5
2022թ. «02» «8» -ին
կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039683 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան _____ (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163018015129 ՀՎՀՀ 02219597 Նախագահ՝ Արփենիկ Աբրահամյան _____ (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 6
2022 թ. «02» «8» -ին
կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	**նկարագիրը**	**կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում	Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում և ընտանիքում ապրելու իրավունքը, նրանց սոցիալական ներառումը հասարակություն, ապահովել ծառայությունների մատուցումը ցերեկային կենտրոնում՝ ներառման սկզբունքով, կանխարգելել հաշմանդամություն ունեցող անձանց	Ցերեկային կենտրոնում իրականացվում է շահառուի կարիքների և կարողությունների գնահատում բազմամասնագիտական թիմի կողմից: Գնահատման արդյունքում մշակվում է համապատասխան սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրում նախանշվում են շահառուի հետ իրականացվող մասնագիտական պարապմունքները,	Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: Շահառուների այցելությունների գրանցում այդ նպատակով պահվող մատյանում: Կազմակերպությունում հաճախումների պլանի /դասացուցակի/ առկայություն: Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի իրականացման արդյունքում 70% շահառուների մոտ արձանագրել	31.12.2022	Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է ամսական հաշվետվություն և կատարված աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն է ներկայացնում նախարարություն:	11 326 888 (տասնմեկ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ութ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ

		մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ: Ծրագրի շրջանակում ցերեկային կենտրոնում սոցիալ-վերականգնողական ծառայություններ են մատուցվում հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող (այսուհետ՝ շահառու): Սոցիալական ներառման սկզբունքն ապահովելու համար կենտրոնում ծառայություններ կարող են ստանալ նաև հաշմանդամություն չունեցող անձիք, որոնք սույն ծրագրի շահառու չեն: Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության	խմբակները և ծառայությունները: Կարիքների գնահատումն իրականացվում է շահառուի հաստատություն ընդունվելիս՝ մեկ ամսվա ընթացքում, կիսամյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածով հաճախումների դեպքում՝ սկզբում և վերջում: Գնահատումը պետք է իրականացնի կազմակերպությունը՝ ըստ նախարարության հետ համաձայնեցված մեթոդաբանության (կցվում է):	կարողությունների և անկախ կյանքի հմտություններ աճ:		(info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	
			Մասնագետների գնահատման համաձայն՝ շահառուները բաժանվում են խմբերի՝ ըստ կարողությունների և հմտությունների, յուրաքանչյուր խմբում 6-10 շահառու: Յուրաքանչյուր շահառու շաբաթական առնվազն	Զևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման հմտությունները: Նպաստել շահառուների կարողությունների և հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին			

		(այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Կազմակերպությունը ծառայությունները տրամադրելիս պետք է առաջնորդվի՝ • «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով • «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով • ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշումով:	20 ժամ ծառայություններ է ստանում կենտրոնում: Կենտրոնում շահառուների հետ աշխատում են հետևյալ մասնագետները՝ հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, մասնագիտական ուսուցման խմբավար: Ծառայություններն իրականացվում են խմբային և անհատական պարապունքների միջոցով:	նրանց լիարժեք մասնակցությանը, ուսուցանել նրանց կարողություններին համարժեք գիտելիքներ, զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունները, փոխել վերաբերմունքն իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ:			
			Փայտագործության, կավագործության, բացիկների պատրաստում, մոմագործության, կարու ձևի, գորգագործության, երաժշտաթերապիայի, արտթերապիայի համակարգչային ուսուցման և այլ հմտությունների ուսուցանում:	Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում, տրամադրել մասնագիտական կողմնորոշման ծառայություններ: Աջակցություն շահառուների ընտանիքում ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացմանը: Յուրաքանչյուր շահառու առնվազն երկու խմբային			

				պարապմունքներում ընդգրկվածություն:			
			Ազատ ժամանցի ու մշակութային միջոցառումների կազմակերպում, իրականացում	Շահառուների մասնակցությամբ կազմակերպվում է տարեկան նվազագույնը 4 հանրային միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը:			
	Ընդամենը						

Լրացուցիչ դրույթներ

- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի տարածքի մատչելիությունը (թեքահարթակ, վերելակ, սանհանգույց, հարմարեցված գույք և այլն), ունենա մասնագիտական անձնակազմ, ապահովի տրանսպորտային միջոցի առկայություն՝ շահառուների տեղափոխումը, ըստ անհրաժեշտության (տնից-ցերեկային կենտրոն, էքսկուրսիաներ և այլն) կազմակերպելու նպատակով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039683 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	*Անվանումը՝* «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ *Հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Չեխովի 33/1, մուտքը Մանանդյան փողոցից «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163018015129 ՀՎՀՀ՝ 02219597 Նախագահ՝ Արփենիկ Աբրահամյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.